ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ
SPECIAL TOPIC: GOD TESTS HIS PEOPLE

«Ստուգել» տերմինը (BDB 650, KB 702, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ) կիրառվում է «փորձելու» իմաստով: Այն կիրառվում է մարդուն մի տեղ հասցնելու իմաստով, որտեղ նրանք գիտակցում են և գործում իրենց սահմանած առաջնահերթություններով: Ակնհայտ է, որ Ծննդոց 12-ից մինչև 22 Աստված ներկայացնում է Աբրահամին մի շարք իրավիճակներում (ռաբբիներն ասում են տասը), որպեսզի իր սերն ու վստահությունը ուղղի Աստծո մեջ և միայն Աստծո վրա: Այս ստուգարքները այնքան էլ Աստծո համար չէին, այլ Աբրահամի և նրա համար, որ Աբրահամը ճանաչի իրեն քաղդեացիների Ուր քաղաքից դուրս կանչող Աստծուն: Աբրահամին ասվեց, որ թողնի իր ընտանիքը, տունը, ընկերներին, ժառանգությունը, ավանդույթները և անգամ ապագան (իր խոստացյալ որդուն) Աստծուն հավատքով հետևելով: Աստված ստուգում է Իր բոլոր զավակներին իրենց առաջնահերթության ասպարեզում (տես՝ Մատթ. 4:1բ, Եբր. 5:8, 12:5-13):

Աստված ստուգում է (BDB 650), որպեսզի ճանաչի (BDB 393, տես՝ <u>Հատուկ Թեմա. Ճանաչել</u>): Իսրայելը հաճախ փորձեց Աստծուն իրենց անհնազանդությամբ և Աստված ապացուցեց, որ հավատարիմ է Իր խոսքին: Այժմ Աստված է հնարավորություն ընձեռնելու Իսրայելին և իր ժողովրդին ցուցաբերելու իրենց դավանած հավատարմությունն ու հավատքը՝

1. Աստված փորձեց Իր ժողովրդին՝ հավաքական առումով.
   ա. Ելից 15:25, 16:4, 20:20
   բ. Բ Օրինաց 8:2,16, 13:3
   գ. Դատ. 2:22, 3:1,4
2. Աստված փորձեց անհատ Իսրայելացիների՝
   ա. Աբրահամին, Ծնն. 12:1-12
   բ. Եզեկիային, 2 Մնաց. 32:31
3. Սաղմոսերգուները կանչում են Աստծուն, որ փորձի իրենց, որպեսզի հեռացնի իրենցից թաքուն մեղքերը (տես՝ 26:2, 139:23):
4. ՆԿ-յան Աստծո ժողովուրդը հավասարապես փորձվում են, ինչպես Հիսուսը փորձվեց (Մատթեոս 4, Ղուկաս 4, Եբր. 5:8): Տե՛ս <u>Հատուկ Թեմա. Փորձել բառի հունարեն տերմինները և դրանց նշանակությունները:</u>